Գործ թիվ ԵԴ2/3704/02/26

Քաղվածք

ՎՃԻՌ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

18.05.2026թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Դատարան), հետևյալ կազմով՝

նախագահությամբ՝ դատավոր Դ. ՕՀԱՆՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «ՔԻՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00928694, պետական գրանցման համար՝ 282.110.1107937, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, ՀՀ, ք. Երևան, Մխիթար Հարեցու փողոց, շենք 5) (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ «Տեքստիլ որոլորտի օպերատոր հիմնադրամ» ՀՄԴ-ի (ՀՎՀՀ՝ 02931267, պետական գրանցման համար՝ 222.160.1472813, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մհեր Մկրտչյան փողոց, շենք 5) (այսուհետ՝ Հիմնադրամ)՝ «Տեքստիլ որոլորտի օպերատոր հիմնադրամ» ՀՄԴ-ի կողմից իրավաբանական խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՏՈՕ-ԲՄԽԾՁԲ-26/4 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՎՃՌԵՑ

1. «Քիսթոուն» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Տեքստիլ որոլորտի օպերատոր հիմնադրամ» ՀՄԴ-ի՝ «Տեքստիլ որոլորտի օպերատոր հիմնադրամ» ՀՄԴ-ի կողմից իրավաբանական խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՏՈՕ-ԲՄԽԾՁԲ-26/4 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Դ. ՕՀԱՆՅԱՆ**

Ստորագրող
ԴԱՎԻԹ ՕՀԱՆՅԱՆ
2914920504
2026-05-19 19:13:17 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից